

Ժողովուրդ

65
(2915)

16 մայիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Թ. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԿԱՊ ԶՈՒՆԵՐ ՖՈՐՈՒՄԻ ՂԵՏ



Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում երեկ անցկացվում էր Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի 4-րդ տարեկան հանդիպում եւ բիզնես ֆորումը:

Ֆորումի շրջանակում, որը Հայաստանում սկսվել է մայիսի 14-ից եւ շարունակվելու է մինչեւ մայիսի 16-ը, մասնակցում են աշխարհի խոշորագույն կազմակերպությունների ներկայացուցիչներ, կան հատուկ հրավիրված հյուրեր արտասահմանից, ինչպես նաեւ մի շարք օտարերկրյա դեսպաններ:

Երեկ ֆորումի 2-րդ օրն էր, երբ որպես բանախոս հանդես եկավ նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա Օպերայի շենք մտավ՝ «դավաճան հողատու» վանկարկումների ներքո՝ շրջապատված հազարավոր ոստիկաններով:

Փաշինյանը, խոսքը սկսելուց առաջ, նախ ներողություն խնդրեց, քանի որ պիտի հայերեն ելույթ ունենար, ապա ելույթում բեմից հայտարարեց իր՝ 6 տարվա կառավարության ընթացքում ձեռք բերած «հաջողությունները»՝ թվերով:

Մասնավորապես, Փաշինյանը նշեց, որ թեեւ 6 տարիների ընթացքում ՀՀ-ն անցել է Covid-19-ի համավարակի, պատերազմների միջով, այնուամենայնիվ գրանցել է 30% տնտեսական աճ: Տնտեսագետները կփաստեն, որ եթե այդպես լիներ, ապա Հայաստանը կհավակներ դառնալ Սինգապուրը, եւ կստեղծվեր «հայկական հրաշքը»:


Ինչեւէ, սա միակ արձանագրված փաստն էր, որը կապ ուներ այս ֆորումի հետ: Փաշինյանը բեմից օգտագործեց շանսը եւ խոսեց ոչ թե բուն ֆորումի կամ ՀՀ-ում այսօրվա պատվիրակություններ հյուրընկալելու մասին, այլ նույն պահին դրսում բողոքի եւ իրազեկման ակցիաներ իրականացնող քաղաքացիներին ուղերձ հղեց:

Նա պարբերաբար շեշտեց, որ. «Մենք խաղաղության կոչ ենք անում, որի ապացույցն է «խաղաղության խաչմերուկ» ծրագիրը, սակայն ո՛չ մենք, ո՛չ Ադրբեջանը չգիտենք՝ ինչ ասել է խաղաղություն»:

Փաշինյանը, պահը բաց չթողնելով, ընդգծեց, որ սահմանազծում եւ սահմանազատում անում են խորհրդային միության փլուզումից հետո ունեցած քարտեզներով՝ կրկին հիշեցնելով Ալմաթիի հռչակագիրը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:


«Ժողովուրդ» օրաթերթի ԶՊ-ամերձ աղբյուրները փոխանցում են, որ իշխանությունները ողջ կազմով, ուշի-ուշով հետետում են Բագրատ Սրբազանի ամեն խոսքին, քայլին ու ծրագրերին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հորդորել է թիմակիցներին Սրբազանի հայտարարությունների հետ կապված անպայման հակափաստարկներ ներկայացնել, հերքել ու տարբեր պնդումներով ցույց տալ, որ Բագրատ Սրբազանը «նախկիններից» է, ու նրա նպատակը «նախկիններին» իշխանության բերելն է: Բայց հրահանգվել է դա անել կոռեկտ, առանց անվանական վիավորանքների, որպեսզի միջազգային գործընկերները «ամոթանք տալու» առիթներ չունենան: Նույն աղբյուրները փոխանցում են, որ տեսական ժամանակ է, ինչ Փաշինյանի հետ տես-ա-տես չեն հանդիպել թիմակիցները, քննարկումներ չեն ունեցել, բայց տարբեր ձեռքով մեխիջներ են ստանում Բագրատ Սրբազանին անհայտ օգտատերերի միջոցով վարկաբեկելու ուղղությամբ: Ակտիվ է նաեւ Փաշինյանի ընտանեկան կայքը: Հիշեցնենք, որ Փաշինյանի հետ վերջին ժամանակներում ԶՊ-ն հաճախ էր հանդիպում, բայց Սրբազանի սկսած շարժումով պայմանավորված՝ հանդիպումները չեն կայանում, քանի որ մտավախություններ ունեն, որ բողոքի ակցիաները կարող են տեղափոխվել իրենց գրասենյակի հարակից տարածքներ: Դրա համար Փաշինյանի հետ շփումները դարձել են օսլայն: Ի դեպ, Նիկոլ Փաշինյանը վերջին ժամանակահատվածում նաեւ վարչության հետ հանդիպում չի ունեցել (նրանք ամեն երեքշաբթի հանդիպում էին), ու վարչությունը անհամբեր սպասում է, թե երբ են հավաքվելու՝ իրավիճակը քննարկելու ու իրենց անելիքները հասկանալու համար:



Երեանի քաղաքապետի՝ 10.05.2024 թվականի որոշմամբ՝ թույլ է տրվել «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ անվան մեջ օգտագործել «Երևան» բառը (կենտրոնը պետք է կառուցվի «Հայփոստի» շենքի բազայի վրա): Այս որոշումը կարողալիս ակամա հիշում ենք 10 միլիոն արժողությամբ ծառի ծրագիրը, որ պետք է տնկվեր տարիներ առաջ, միլիարդավոր դոլարների ներդրումները, որ ԶՊ իշխանության գալուց անմիջապես հետո՝ պետք է «հեղեղեին» ՀՀ տնտեսությունը, եւ բազում այլ չիրականացված խոստումներ: Ուղղակի ընթերցողին հիշեցնենք, որ աշխարհին հայտնի առևտրի համաշխարհային հատուկ նշան կենտրոններ, կոմպլեքսներ կան Նյու Յորքում, Դուբայում: Հ.Գ. Համեմատե՛ք Մանիթեթենն ու Սարյան փողոցի «Հայփոստի» շենքը եւ կպատկերացնեք, թե որ իրականության մեջ է գտնվում ՀՀ-ն՝ արդեն 6 տարի:



Քաղաքական վերջին բուռն գործընթացներին զուգահեռ Նիկոլ Փաշինյանն ավելի փակ ու գզուշավոր է դարձել: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ այն բանից հետո, ինչ Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժումն ակտիվ նոր քաղաքական արոցներ է սկսել, մի կողմից ամենուր անհնազանդության ակցիաներ են, մյուս կողմից էլ Բագրատ Սրբազանը պարբերաբար հանդիպումներ է ունենում քաղաքական տարբեր ուժերի, գործիչների ու այլ ուղղությունների ներկայացուցիչների հետ, զուգահեռ այս ամենին՝ Փաշինյանը որդեգրել է ավելի պասիվ գործելաճան: Ինչպես մեզ իշխանականներն են պատմում, նա առանց այն էլ շատ փակ է եղել, ԶՊ-ականներից՝ հաշված մարդկանց հետ է շփվել, բայց վերջին օրերին ավելի զգուշավոր է դարձել, ու ԶՊ-ում չգիտեն՝ ինչ կա նրա մտքին, ինչ է պատրաստվում անել: Արդյոք կորոշի եւ անակնկալ հրաժարական կտա, երբ ճշումը մեծանա, թիմում չգիտեն, բայց եւ քննարկում են ինչպես պարպել օրեցօր խորացող դժգոհությունը իրենց իշխանության նկատմամբ: Բոլոր հարցումները, իհարկե, ցույց էին տալիս մինչ այս, որ Փաշինյանի կառավարության այլևս չի վստահում հասարակության կեսից ավելին, բայց հիմա, նրանք համոզվում են դրանում եւ տեսնում, թե ինչպես է հանրության դժգոհ հատվածը կոնսոլիդացվում Բագրատ Սրբազանի շուրջ, եւ անգամ կատաղի հակաքաղաքականություն չի օգնում. մարդիկ վստահում են Սրբազանին:





ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ դեմ է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Լիլիթ Մարկոսյան (47 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Մարկոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչև 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ ինստիտուցիոնալ կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը: «ԺՈՂՈՎՈՐԴ». Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ նորածին երեխաների ծնվելուց հետո դարձադիր է արդյոք բառասունհոգանել, թե ոչ:

Անժելա Մանուկյան (28 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ըստ բնական օրինաչափության՝ ծնված երեխան մտնում է կյանքի նոր միջավայր, որը խիստ տարբեր է նրա նախնական մայրական ներքին միջավայրից: Եվ նախքան իրական կյանք մտնելը երեխան պետք է հարմարվի կյանքի այս նոր միջավայրին՝ օդին, լույսին, ձայնին: Քառասունքի կանոնը մաքրության օրենք է, որ վերաբերում է նախ երեխայի մայրիկին, ապա՝ երեխային: Այցելել կարելի է միայն, իհարկե, հիգիենիկ կանոնները պահպանելով, որպեսզի չվարակեն մոր եւ երեխայի թույլ օրգանիզմները: Երեխային տեսակցության գալն արգելվել քրիստոնեության հետ կապ չունի: Երեխան ծննդյան առաջին իսկ օրից պետք է սկսի սովորել կյանքին: Նա պետք է ունենա բացօթյա զբոսանքներ, ոչ թե տնային կալանքի տակ գտնվի:

Արարատյան հայրապետական թեմ

«ԺՈՂՈՎՈՐԴ». Նկատենք, որ եկեղեցին երեխայի քառասունքի հատուկ կարգ ունի, համաձայն որի՝ ծննդյան օրվանից հաշված քառասուներորդ օրը ծնողները երեխայի հետ միասին գալիս են եկեղեցի եւ օրհնություն ստանում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի



Սրբազան պայքարը շարունակվում է: Երեկ Բագրատ Գալստյանյանի առաջնորդությամբ քաղաքացիները մասնակցել են խաղաղ անհնազանդության ակցիային, ապա երթով շարժվել Սուրբ Աննա եկեղեցի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	0 + 3 +10 + 14	Արարատ	+9 + 12 +20 + 23
Կոտայքի լեռներ	+1 + 4 +10 + 12	Արմավիր	+8 + 10 +20 + 22
Կոտայքի նախալեռներ	+5 + 8 +16 + 18	Վայոց ձորի լեռներ	+2 + 5 +11 + 13
Գեղարքունիք	+1 + 5 +13 + 17	Վայոց ձորի նախալեռներ	+9 + 11 +19 + 22
Լոռի	+2 + 5 +13 + 16	Սյունիքի հովիտներ	+8 + 12 +22 + 25
Տավուշ	+4 + 8 +17 + 19	Սյունիքի նախալեռներ	+6 + 8 +14 + 17
Արագածոտնի լեռներ	0 + 4 +9 + 13	ԼՂՀ	+7 + 9 +13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+6 + 9 +16 + 19	Երեւան	+13 + 15 +15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 15.5.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: